

# ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

---

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 5

15 Յունիս 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1891

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. *ՆՈՐ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԼԵՒՈՆԻ ԺԳ.Ի* Գործաւորաց վիճակին վրայ: — Թարգմ. Գէորգ Վ. Թէրզեպետեան:
2. *ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ ԲԸՆԱՆԻ ՎՐԱՅ* (Շար. եւ վերջ): — Յարութեան Ունեան:
3. *ԴԻՏԱԿԱՆՔ* Ծովահարուքեան վրայ հոր տեսութիւն: — Յ. Վ. Բ:
4. *ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ*: — Յ. Վ. Բ:
5. *ՄԱՐՄԱՄԱՐՁ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ* (Շարայարեւի): — Յովհ. Վ. Անեպեան:

# Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻԻ Ե

15 Յունիս 1891

ՆՈՐ ԾՐԶԱԲԵՐԱԿԱՆ

ԼԵԻՈՆԻ ԺԳ. Ի

Գործաշորաց վիճակին վրայ

Ա.Զ.Դ

Ինչպէս Հանդիտիս նախընթաց թուոյն մէջ խոստացեր էինք, այս անգամ կը սկսինք հրատարակել Սրբազան քահանայապետին Գործաշորաց վիճակն վրայ տուած վերջին Ծրձաբերական Կտորակին թարգմանութիւնը, որպէս զի պատուական ընթերցողք անձամբ ճաչակին այս ընտիր եւ ամեն հայեցակէտով կատարեալ Գործն, փորձով անմեն անոր անդուգական յատկութիւններն, որոնք ամսէ մ'ի վեր պետական եւ գրական աշխարհին գրադմունքն եւ սքանչացումը կը կազմեն:

Գ. Վ. Թ.

Մ Բ Ա Ջ Ա Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Ե Դ Ո Յ

## Լ Ե Ի Ո Ն Ի Ժ Գ .

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Յ Ի Ն Ն Ա Խ Ա Խ Ն Ա Մ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ա Պ Ե Տ Ի

Թ Ո Ւ Ղ Թ Շ Բ Ջ Ա Բ Ե Բ Ա Կ Ա Ն

Ա Ռ Հ Ա Մ Օ Բ Է Ն Պ Ա Տ Բ Ի Ա Բ Բ Ո Ի Ն Ս , Մ Ե Տ Բ Ա Պ Օ Լ Ի Տ Ս


Ա Բ Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ո Ի Ն Ս Ե Ի Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ո Ի Ն Ս

Ո Բ Բ Շ Ն Ո Բ Հ Ս Ե Ի Հ Ա Ղ Ո Բ Դ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ո Ի Ն Ի Ց Ի Ն

Ը Ն Դ Ա Ռ Ա Բ Ե Լ Ա Կ Ա Ն Ա Թ Ո Ռ Ո Յ



*Գործաշորաց վիճակին վրայ*



Մ Ե Ն Մ Ա Ր Ո Յ Ե Ղ Բ Ա Ր Յ , Հ Ա Մ Օ Բ Է Ն Պ Ա Տ Բ Ի Ա Բ Բ Ա Յ , Մ Ե Տ Բ Ա Պ Օ Լ Տ Ա Յ , Ա Բ Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Յ Ե Ի Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Յ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Է Տ Ի Ե Ջ Ե Բ Ա Յ , Ո Բ Բ Շ Ն Ո Բ Հ Ս Ե Ի Հ Ա Ղ Ո Բ Դ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ո Ի Ն Ի Ց Ի Ն Ը Ն Դ Ա Ռ Ա Բ Ե Լ Ա Կ Ա Ն Ա Թ Ո Ռ Ո Յ

## Լ Ե Ի Ո Ն Պ Ա Պ Ժ Գ .

Մ Ե Ծ Ա Ր Ո Յ Ե Ղ Բ Ա Ր Յ

Ո Ղ Է Ո Յ Ի և Ս Դ Ր Ա Ք Ե Ղ Ր Ա Ս Ի Ա Ն Օ Ր Ի Ն Ո Յ Ի Յ Ի Ն Ի

Մորաձեռութեան անցալ տնկանքն՝ որ ի բազում ժամու-  
նակաց վեր ի վայր կը յուզէ պետութիւնները , միանդամ  
բորբոքելով , ալ այնուհետեւ պէտք էր սպասել որ փոփոխելու

ցանկութիւնն ի քաղաքազրաականէն ուր ուրեմն անցնէր սահմանակից ընկերական անտեսութեան երկրինսլրայ ։ Եւ յիրաւի , ճարտարութեան նոր յառաջադիմութիւնը եւ արուեստներուն բուն նոր ընթացքը , սերանց եւ դործաւորաց յարարերութիւններուն այլայլումը , սակաւաթիւ անձանց յորդառատ փութամութիւնն եւ բազմութեան չքաւորութիւնը , դործաւորաց յանձինս առաւելագոյն փտահութիւնն եւ ընդ միմեանս սերտ միարանութիւնն , եւ՝ զլուխ ամենայնի , բարոյից չտրաչար ապականութիւնն , սկիզբ տուին անարկու մաքաւամտ օրէնութիւ , քանի՜ն ծանրակշիւ հանդամանք բովանդակեալ են՝ յայտ անտի է , զի յակնկալութեան ունի ողիններն եւ ի վարանս . եւ կը տալնապէ ու կը զբաղէ զխոնոց հանձարը , իմաստնոց խորհուրդը , ժողովրդեան համախմբութիւնները , կարուստիտ օրէնաւսուցչներն , վեհապետաց խորհուրդներն . այնպէս որ չիք արդ ի միջի այնքան մեծ խնդիր մը , որ աւելի սաստկութեամբ մարդիկներուն ունիանամբը գրաւած ըլլայ ։ Ուստի առաջի աչաց ունելով Եկեղեցւոյ օրումն եւ հասարակաց փրկութիւնը , ինչ որ ուրիշ անգամներ բրած էինք , Մեծարոյ Եղբարք , զրելով Ձեզ քաղաքական իշխանութեան , մարդիկդէն ազատութեան , պետութեանց Քրիստոնէական կազմակերպութեան եւ խարէական կարծիքները ջրելու յարմար եղող ուրիշ ատնոց յար եւ նման նիւթերու վրայ , նոյնպէս եւ այժմ միեւնոյն պատճառաց համար կարեւոր գտնեցինք գրել Ձեզ Գործասարաց միճակին վրայ ։

Թէեւ արդէն շատ անգամ այս տեսակ նիւթոյ վրայ յարմար աւթիւ հարեւանցի ինն խօսած եմք , սակայն այս թղթոյ մէջ խնդրոյն վրայ լրացէս եւ ամենայն խնամով ճառեմ Մեր Առաքելական պաշտամանս սրարտք կը համարիմք , որպէս զի ի յայտ դան այն սկզբունք՝ որոց օժանդակութեամբ , ըստ պահանջելոյ ճշմարտութեանն եւ արդարութեանն , վէճն յանգի իւր լուծման ։ Եւ այս լուծումն կարի տաժանելի է եւ ոչ զերծ ի փոանդաց . Այնու զի զժուարին է չափաւորել այն իրաւունքներն եւ պարտիք որք պարտին իրարու զօղել ընչաւէսն ու սինլքորը , զբանապլուսն ու աշխատութիւնը ։ Իսկ խնդիրն ինքնին փոանգաւոր է , որովհետեւ զայն յաճախ խռովարար ու չաբարուեստ մարդիկ կը խնդաբլուրն եւ զամբոխն զրոգելու եւ խռովութիւններ յարուցանելու կը դործածեն ։ Որպէս եւ իցէ , յայտ յանգիման կ'երեւի , ըստ միարան կարծեաց ամենեցուն , որ հարկ է ստորին դասակարգի մարդիկներուն փութով եւ յար-

մար միջոցներով իննամ տանել, որովհետև մեծաւ մասամբ ինկած են յանիրաւի թշուտու եւ ազեապի վիճակի մը մէջ:

Անցեալ վերջին դարը արուեստաւորաց հին ընկերութիւնները ջնջեց, առանց անոնց տեղ բան մը գնելու, այս ընկերութիւններն ստորին դասու համար սպաւէն մ'էին. միւս կողմէ հանրային հաստատութիւնք եւ օրէնք կրօնական սկզբունքները ի բաց մերժեցին, ալ ժամանակն մասնեց անդադաբար անոր եւ անսպաւէն գործաւորները տէրերուն անգթութեան ու մրցակիցներուն սպերասան ցանկութեանց: — Աճեցոյց չարիքր ամենախաւին վաշխ, որ թէպէտ կրկին եւ կրկին ի գոտատուանէ Եկեղեցւոյ գոտապարտեալ է, տակաջն այսու ամենախիւ ուրիշ երեւութի տակ ընչաքաղց ու շահասէր մարդիկ զայն միշտ կը գործածեն: Յաւել ի վերայ եւ աշխատութեան մննախնամար, եւ գրեթէ սակաւուց ձեռքն անցած ամենայն իրաց սուտուրը, այնպէս որ քանի մը ընչաւէտք եւ մեծատունք գոցցես ծառայական լուծն դրած են անթիւ անհամար սինդրորաց բաղմութեան վրայ:

Ի դարման այսց չարեաց, Բնկերվարհան, հարուստներու գէմ կարօտելոց ատելութիւնը գրգռելով, կը յաւակնին հաստատել թէ ընչից առանձնական ստացուածք պէտք է բնաջինջ բնել, եւ փոխանակ նոցա՝ իւրաքանչիւր ուրուք գոցքը ամենուն հասարակաց բնել, եւ զայն թաղապետութեան, պետութեան ձեռք մատակարարել: Այսպէս ուրեմն ստացուածներն յառանձնականաց ի հասարակութեան հեղլով, կը համարին դարման մատուցանել ներկայ չարեաց, ինչքն եւ օգուտն ու գիւրը քաղաքացեաց մէջ հաւասարութեամբ բաժնելով: Բայց այս գրութիւնը ոչ թէ միայն ամենուին իսկ անյարմար է վէճն ի միջոց բառնալու, այնու զի կ'անիրաւէ նոյն ինքն գործաւորաց դասուն, այլ նաեւ կարի իմն բնագէմ է արդարութեան, փոսնով օրինաւոր ստացողները կը բռնաբարէ, կատախարութեան պաշտօնը կը խեղաթիւրէ եւ բնաւին կ'աղմկէ ընկերային կարգը:

Եւ իրաւոյնէ գիւրաւ կ'իմացուի թէ շահ բերող արուեստի մը հետ զբաղողներուն յանձն առած աշխատանոց ներքին պատճառն եւ արուեստաւորին նկատած անմիջական վախճանն ուրիշ բան չէ, եթէ ոչ ինչք ձեռք բերել եւ զայն իրը իրեն յատուկ՝ անձնական իրաւամբ ստացեալ պահել: Որովհետև եթէ աս մարդ իւր ոյժն ու ճարպիկութիւն այլոց տրամապրութեան ներքեւ կը գնէ, զայս այն պատճառաւ միայն կ'ընէ, որպէսզի

չաճի ինչ որ հարկաւոր է յուսեալ եւ ի սէտս կենաց . վասն-  
որոյ իւր ծառայութիւնէն կ'ախկալէ ոչ թէ միայն վարձք ինդ-  
րելու, այլ նաև զայն ըստ հաճոյս զործածելու ճշմարիտ եւ  
կատարեալ իրաւունքք: Ուստի եթէ խնայողութեամբ ծախսելով  
գումար մը մէկ կողմը դրաւ, եւ իւր խնայութեան ստուգին  
պահպանութիւնը ապահովելու համար զայն արտի մը կապեց,  
յիբաւի այսպիսի արտ մը ուրիշ բան չէ, եթէ ոչ նոյն ինքն  
վարձքը՝ ուրիշ երեւոյթ մը միայն առած. նորին վասն զործա-  
ւորին այս կերպով գնած երկիրը այնչափ իրեն ստացուածքը  
պիտի ըլլայ որչափ իր աշխատանաց վարձքը:

Ահաւասիկ բոլորովին ասոր վրայ կը կայանայ շարժական  
կամ անշարժ բնչից սեպհականութիւնը: Ուստի Ընկերվարական  
առանձնականաց ստացուածները հասարակաց բնելու ջանալով,  
վատթարացոյն եւս կ'ընեն գործաւորաց վիճակը, որովհետեւ  
իրենց վարձքը զեռեղելու աղատութիւնը բառնալով, հետեւա-  
բար կը զրկեն զանոնք իրենց ստացուածը շատցնելու եւ իրենց  
վիճակը բարւոքելու յոյսէն եւ կարողութիւնէն:

Այլ, որ մեծագոյնն է, այնպիսի դարման մը կ'առաջարկեն  
որ յայտնապէս արդարութեան հակառակ է. քանզի անձնակար  
եւ մասնաւոր սեպհականութիւնը ի բնութենէ տուեալ իրաւ-  
ունք մի է: Արդարեւ եւ յայտ մեծ տարբերութիւն կայ մար-  
դոյ եւ անբան անասնոց միջեւ: Վասնզի անասուններն իրենք  
զիրենք չեն կառավարեր, այլ կ'ուղղուին եւ կը կառավարուին  
երկու ընդարդոյս բնազգամաբ, որոնք մէկ կողմանէ կը պահպա-  
նեն անոնց գործելու կարողութիւնը եւ ոյժը կը զարգացնեն,  
միւս կողմանէ անոնց ամէն մէկ շարժումը կը պոռնն ու կ'ու-  
րոշին: Միով բնազգամաբ ի պահպանութիւն իւր եւ անձին կը  
մղուին, իսկ միւսով՝ ի պահպանութիւն տեսակին: Ներկայ եւ  
առձեռն պատրաստ գտնուող բաներուն գործածութեամբն աս  
երկու արդիւնքն ալ զիւրապէս ձեռք կը բերին, եւ ոչ իսկ կըր-  
նային ասիկէ աւելի բան մ'ընել, զի միայն զգայականութեամբ  
եւ ի զգայարանաց ըմբռնեալ անհատական իրերով կը շարժին:  
Իսկ այլ է ամենուին բնութիւն մարդոյ: Կայ ի նմա ամբողջ  
միանգամայն եւ կատարեալ զօրութիւն զգայական բնութեան,  
որով եւ այս կողմանէ արուած եւ մարդուն, ինչպէս զգայակա-  
նաց բոլոր սեռին, մարմնաւոր բաներուն բարիքը վայելի: Իսկ  
զգայական բնութիւնը, թէեւ լրացէս ստացուած, ոչ թէ միայն  
մարդկային բնութիւնը չբովանդակեր, այլ նաև շատ աւելի

ստորնագոյն է քան զմարդիկէնն բնութիւն , եւ անոր հնազանդ  
եւ ստորադրեալ ըլլալու կարգեալ է : Այն որ ի մեզ գերագոյն  
է եւ ընտրելագոյն, այն որ մարդը մարդ կ'ընէ , եւ բոլորով սե-  
ռիւ յանասնոց կը զանազանէ , միտքն է կամ բան : Եւ այսու  
պատճառաւ զի այս կենդանին միայն բանական է , պէտք է  
մարդուն տալ արտաքին բարիքն ո՛չ միայն ի գործածութիւն ,  
որ ամեն կենդանեաց հասարակ է , այլ ի սեպհականութիւն  
հաստատ եւ մշտատեւ իրաւամբ . եւ ո՛չ միայն այն բաները որք  
գործածութեամբ կը սպառին , այլ եւ ինչ որ յետ գործածու-  
թեան կը տեւէ կը մնայ :

Եւ այս առաւել եւս յայտ յանդիման կ'երևի , եթէ մարդ-  
կայն բնութիւնն աւելի խորապէս նկատուի յինքեան : Զի մարդ  
իւր բանիւ անհամար առարկայներ կը սիրեն : Եւ ներկայ իրաց կը  
յաւելու եւ կը կցէ ազազայնե ըն ալ . եւ ինքն տէր է ինքնիշ-  
խան իւր գործոց , ասոր համար յաւիտենական օրինաց տակ,  
եւ Աստուածայն բնո՛հանուր նախախնամ տեսչութեան կառա-  
վարութեան ներքեւ , մարդն գոզցես ինքն իրեն կը պատկանի,  
ինքն իր օրէնքն է եւ իւր նախախնամութիւնը . որոյ վասն իշ-  
խան է նա ընտրելու այն բաները, զորոնք ո՛չ միայն ի ներկայիս  
այլ եւ յապա ժամանակս ի խնամն անձին յարմարագոյն եւ  
պատշաճագոյն կը գտտէ : Յորմէ կը հետեւի թէ մարդն ունե-  
նալու է ո՛չ միայն երկրիս պտղոց եւ արմտեաց տէրութիւնը ,  
այլ եւ նոյն խն երկրի, որուն արգաւանդ ծոցէն սալազայն  
հարկաւոր եղած բաներուն մատակարարուիլը կը տեսնէ : Մար-  
դուն ամեն կարիք ու պէտք գոզցես անդադար իմն եղանակաւ  
կը նորոգուին . այսօր կը ընուս , վաղիւ նորէն կը պահանջին :  
Ուստի բնութիւնը մարդուն հաստատ եւ ցմիշտ մնալիք բան մը  
տուած ըլլալ կը պարտի , յորմէ կարելի ըլլար մշտատեւ ձեռն-  
տուութիւն : Եւ այս տեսողականութիւնը կ'ընայ տալ միմիայն  
երկիր , իւր բեզմնաւորութեամբ :

Եւ պէտք չէ ի մէջ բերել տէրութեան իննամքն ու տես-  
չութիւնը . որովհետեւ մարդն երկցագոյն է քան զտէրութիւն .  
եւ ասոր համար նա ապրելու եւ իւր գոյութիւնը պաշտպանե-  
լու իրաւունքը ո եւ է տէրութեան կազմուելէն յառաջ ունե-  
ցած է : Եւ այն թէ Աստուած բովանդակ ազլի մարդկան տու-  
ած է զերկիր ի գործածութիւն , ի վայելս . ամենեւին չկրնար  
խախտն ըլլալ անձնական սեպհականութեան : Որովհետեւ Աստ-  
ուած մարդկայն սեռի հաւատարատէս տուած է զերկիր ըսե-

լով չլինացուիլ թէ ուզած ըլլայ որ ամենքն խառն ի խուռն տիրեն անոր վրայ այլ թէ ոչ ումեք սահմանեց անոր մէկ ուրոչեալ մասը ի ստացումն, հասկա անձնական սեպականութեանց սահմանադժութիւնը թողուց մարդկան ճարտարութեան եւ ազգերուն հաստատութեան: Սակայն եւ այնպէս առանձնականաց մէջ բաժնուած այլ ըլլալով, չղաղարիւր երկիրն ամենուն հասարակ օգտին ծառայելէն, այնու ղի չկայ մահկանացու մը որ դաշտերուն բերքովը չնմանի: Երկիր չունեցողը աշխատութեամբ թերին կը ընու, այնպէս որ ճշմարտապէս կարելի է հաստատել թէ պարենն ու պիտոյքը շահելու ընդհանուր միջոցը կը կայանայ յաշխատութեան, զոր կը կատարէ ոք կամ իւր գետնին վրայ, կամ շահարեր արուեստի մը մէջ, որուն վարձքը ոչ այլ ուսուէք է վերջապէս, բայց եթէ երկրի բազմազան բերքերէն որովք փոխանակեալ է արուեստը:

Որմէ զարձեալ կը հետեւի թէ առանձնութեան սեպականութիւնք ըստ ամենայնի համաձայն են ընտելեան: Որովհետեւ այն բաները որոնք կեանքը պահպանելու եւ մանաւանդ կատարելագործելու հարկաւոր են, երկիրն թէեւ մեծ առատութեամբ կ'արտաբերէ, բայց ոչ առանց մշակութեան եւ ինսամոյ մարդկան: Արդ, քանզի ընտելեան բարիքը ձեռք բերելու համար մարդն կը ծախսէ մաքի հանձարն ու մարմնոյ ոյժը, այսու իսկ անձին կը սեպականէ երկիրն այն մասը զոր ինքն մշակեց, յորում իբրեւ թէ զրոյմեց թողուց իւր անձին տիպր. սնանկ որ ամենուին իսկ արդարացի բան է որ նա այն մասը իբր իրենը ստանայ, եւ ոչ ումեք օրէն ըլլայ անոր իրաւունքը եւ ոչ իւրք բռնարարել:

Այս փաստերուն այնչափ է ակներեւ զօրութիւնն որ շատ զարմանալի կ'երեւի հնացեալ կարծեաց նորոգչաց ոմանց ընդ զլինախօսելէն, որոնք թէեւ գետնի զործածութիւնը եւ արտերու զանազան բերքերը ստանձական մարդու կը շնորհեն, այլ կը ժխտեն ամենուին թէ իրաւունք ունենայ ստանալու իբրեւ տէր կամ երկիրն յորում չինեաց, կամ գետնն զոր մշակեց: Զոր ժխտելով չեն տեսներ թէ մարդ իր աշխատանայ արդիւնքէն պիտի զրկուի: Քանզի դաշտն երկրագործին ձեռքովն ու արուեստիւ վարեալ, մեծապէս կը փոխէ իր բնութիւնը. մինչ խուպան էր, կ'ըլլայ արգասաւոր, մինչ անրեր էր, կ'ըլլայ պտղատու: Իսկ այն բաներն որ դայն այս լաւ վիճակի հասուցին, այնպէս գետնին կը միանան ու կը խառնուին կատարելապէս:

որ ըստ մեծի մասին զետնէն անբաժանելի կըլլան : Արդ՝ արդարութիւն է միթէ որ մէկուն քրտինքովը թրջած երկրին մէջ ուրիշ մը գայ տիրապետէ ու վայելէ : Արդար է որ՝ ինչպէս արդիւնքը գործող պատճառին, այսպէս աշխատանայ պտուղն ալ աշխատաւորին սեպհական լինի : Ուստի արժանապէս մարդկային ազգին ընդհանրութիւնը ամենեւին չճարժելով սակաւաթիւ հակառակ կարծիքներէն ու բնութիւնը ուշի ուշով նկատելով, նոյն բնութեան օրինաց մէջ կը գտնայ ստացուածոց բաժանման հիմը, եւ առանձնական սեպհականութիւնները՝ իբրեւ կարի յանկաւոր մարդկան բնութեան եւ խաղաղ ու անպոք բնկերային կենաց , ամեն զարհու սովորութեամբ սրբաշնացոյց : Իսկ քաղաքային օրէնք եւս, որոնք երբ արդար են՝ իրենց զօրութիւնը բնական օրէնքէն կ'աճուեն, այս իրաւունքը , որուն վրայ կը խօսիմք, թէ՛ կը հաստատեն թէ՛ ի հարկին զինու զօրութեամբ կը պաշտպանեն : Նոյն բանը վճռեց Աստուածային օրինաց ճորտութիւնը , որք ուրիշին բաղձալն իսկ ծանրապէս կ'արգելուն : Եւր. Օրէն. Ե. 21. «Բնկերիդ կինը ջպիտի ցանկաս, եւ ոչ իսկ անոր տունը, անոր արտը, անոր աղախինը, անոր եզը, անոր էղը եւ ամենայն ինչ որ անոր կը պատկանի» :

Իսկ սոյնօրինակ իրաւունքներն որ առանձնաբար ստեղծ իւրաքանչիւր մարդու բնածին են , աւելի մեծ զօրութիւն կ'առնուն եթէ ընտանեկան կենակցութեան մէջ մարդկան պարտքերուն հետ կից եւ պատշաճեալ նկատուին : Տարակոյս չկայ որ կենաց տեսակը որոշելու մէջ իւրաքանչիւր ուրուք իշխանութեան եւ ազատ կամաց թող արուած է կամ Յիսուսի Քրիստոսի տուած կուսութեան իրատին հետեւիլ, կամ ամուսնական կապով միանալ : Ո եւ է մարդկային օրէնք չկրնար ամուսնութեան բնական ու նախնական իրաւունքը մարդուն արգելուլ , եւ կամ ո եւ է կերպիւ շրջափակել ամուսնութեան պիտաւոր նպատակը, զոր ի սկզբան անդ Աստուած իւր իշխանութեամբ հաստատեց , «Անեցիք եւ բազմացարուք» (\*) : Ահա ուրեմն ընտանիքն, այս է ընտանեկան ընկերութիւն, կարի իսկ փոքր , տակայն ճշմարիտ ընկերութիւն , եւ քան զամենայն ընկերութիւն քաղաքական, հնագոյն, որ եւ այսու ազգաբաւ պէտք է ունենայ իրեն սեպհական ինչ ինչ իրաւունքներ եւ պարտիք, անկախ ամենեւին ի պետութենէ : Եւ այն սեպհականութեան իրաւունքը

(\*) ԾՆ. Ա. 28

որ ինչպէս սուրացուցինք, անհասանելուն ի բնութենէ պրուած է, պէտք է նաեւ անբաժին ըլլայ ընտանեաց գրուի եղող մարդէն. նա մանաւանդ այնչափ աւելի գորաւոր է այն իրաւունք, որ չափ մարդկային անձը շատ բաներ կը պարունակէ յընտանեկան ընկերութեանս Ամենասուրբ օրէնք է բնութեան որ ընտանեաց հայրն իւր զաւակները ուտեստով եւ ամեն պիտոյիւք հոգայ ու պաշտպանէ. նոյնպէս ի բնութենէ կը մղուի իւր որդեոց՝ իբրու զի հայրենական անձնաւորութիւնը յինքեանս կը կրեն եւ կերպով մը զանի կը շարունակեն հոյալու եւ պատրաստելու նաեւ անոնց ապագայն եւ ժառանգութիւն մը հայթայթել կենաց վրտանդաւոր ընթացքին մէջ թշուառ բաղդէն ձողապրելու համար. եւ այս անմարի է ընել, առանց սեպհակահնութեան մնայուն իրաց, ժառանգութեան ճամբով որդեոցը թողլու համար: Ինչպէս տէրութիւնն, նոյնպէս եւ ընտանիքն, ինչպէս ըսինք, ճշմարիտ ընկերութիւն է, որ կը վարի սեպհական այսինքն հայրենական իշխանութեամբ: Որոյ վասն իւր մօտաւոր վախճանէն գծուած սահմանաց մէջ, ընտանիքն ալ իր պահպանութեան եւ իրաւացի անկախութեան հարկաւոր եղող բաները ընտրելու եւ գործածելու համար գտնէ քաղաքային ընկերութեան հաւասար իրաւունքներ ունի: Գտնէ հաւասար ըսինք, որովհետեւ ընտանեկան ընկերութիւնը քաղաքային ընկերութենէ թէ՛ մտածմամբ թէ՛ իրականութեամբ նախադոյն ըլլալով, յայտնի է որ իւր իրաւունքներն ու պարտիքն եւս թէ՛ նախադոյն թէ՛ բնականադոյն ըլլալու են: Իսկ եթէ անհասանելն եւ եթէ ընտանիք, մարդկային ընկերութեան մէջ մտնելով, փոխանակ օժանդակութեան՝ խոչնդոտն, փոխանակ պաշտպանութեան՝ նուազութիւն իրաւանցն գտնէին, ընկերութիւնն յաւէտ զգուելի կ'ըլլար, քան թէ քաղձալի:

Ուստի քաղաքային իշխանութեան ըստ քմաց մինչև ցներքսագոյն սրբաւայր ընտանեաց միջամուխ ըլլալ ուզին՝ մեծ ու վնասակար մտորութիւն է: Ստոյգ է որ եթէ ընտանիք մը ըստ դիպաց անել դժուարութեան եւ կնճոռոտ կացութեան մը մէջ գտնուելով, չկարենայ ինքնին զելս իրացն գտանել, ոչինչ կ'արգելու որ այն անհարկն մոտատանջութեան մէջ տէրութիւնն աւնոր ի թիկունս համնի. այնու զի իւրաքանչիւր ընտանիք տէրութեան մի մասը կը կաղմնն: Նոյնպէս եթէ ուրեք երբեք առանին որմոց մէջ փոփոխակի իրաւանց չփոթութիւն պտտահած ըլլայ, թող կառավարութիւնը իւրաքանչիւր ումեք վերահաս-

տատէ իւր իրաւունքը, զի այս՝ քաղաքացիաց իրաւունքն է՝ յինքն կորզել. այլ արդարայի եւ պատշաճական պաշտպանութեամբ թեւարկել ու պատսպարել: Այլ աստ պէտք է զկայ անունն տէրութեան պաշտօնատարը . անցանել անգր քան զայս սահման՝ թոյլ չտար բնութիւն: Տէրութիւնը չկրնար ո՛չ փճացնել եւ ո՛չ յինքն գրաւել հայրենական իշխանութիւնը . զի սա մարդկան կենաց հետ միեւնոյն սկիզբն ունի: Որդիք՝ մասն ինչ են հօր , եւ գոզցես հայրենական անձնաւորութեան ծաւալումը. եւ եթէ ուզենք յատկապէս խօսիլ, նոքա՝ ո՛չ անձամբ անձին, այլ հազորդութեանն ընտանեաց յորում ծնեալք են, բազորդ եւ բազմանորդ կըլլան քաղաքային ընկերութեան : Եւ այսու իսկ պատճառաւ զի «Որդիք մասն ինչ են հօր . . . մինչքէն իցեն յանձնիշխանութեան տիս հասեալ պարտ է նոցա կայ մնայ քնդ խնամովք ծնողացն» (\*) Ապա ուրեմն հնչեցարհանձն՝ ծնողաց խնամակալութեան տեղ տէրութեան տեսչութիւնը մուծանելով կը գործեն ընդ դէժ քնան արդարութեան եւ ընտանեկան կապ ու զօրը կը խորտակեն:

Այլ բաց յանիրաւութենէ , նաեւ յայտնազոյնս կը տեսնուի թէ ինչպէս պիտի փոխուէին յայնժամ ու շիտիէին ամեն «քաղաքային կարգեր . եւ քաղաքացեաց համար որչափ դառն եւ վարչելի ծառայութիւն պիտոր հետուէր անտի : Գուռն պիտի բացուէր նախանձու, զրպարտութեանց ու երկպառակութեանց, իւրօքանչիւր ուրուք հանձարոյն եւ ճարտարութեան զրոյիչ խիժանն դազարելով այլ եւս , փարթամութեան աղլերակունքն ինքնին անվրէպ պիտի ցամաքէին . եւ այն իւրեանց մտացածին ցնորեալ հաւատարութիւն , ոչ այլ ինչ պիտի ըլլար իրապէս, եթէ ոչ ամենայն մարդոց անխտիր եւ հաւատարապէս թշուառ եւ խոտան վիճակ :

Այս բաներէս ակն յայտնի կը տեսնուի թէ ընկերվարականաց ստացուածներն հաւատարարածին ընկըւ վարդապետութիւնը կատարելապէս պէտք է մերժել , այնու զի կը վիասէ նոցին իսկ՝ որոց օգնել կ'ուզուի . անհատից բնական իրաւանց կը հակառակի. տէրութեան պաշտամունքն ու հասարակաց անդորութիւնը կը վրդովէ: Մնայ ուրեմն անխախտ, թէ ժողովրդեան զիւրն եւ տիրմանքն որ ինչորուի, զայս նախ քան զամենայն

(\*) Ա. Թով. Բ.—Բ. Խնդ. Ժ. Յօդ. ԺԲ:

պէտք է իբրև հիմն դնել , թէ առանձնութեան սեպհականութիւնները անբանաբարկի պահելու է: Հիմա պիտի բացատրեմք թէ ուստի պէտք է ճարել ինչպէս զարմանք:

(Շարայարեի)

Թարգմ.

Գեորգ Վ. Թերզիպաշեան



### Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

### Ռ Ը Ն Ա Ն Ի Վ Բ Ա Յ



(Շարայարութիւն եւ վերջ)

Սաիայն որչափ զեզեցիկ է Աւերաբանական գաւառին (la province évangélique) նկարագիրը , որպիսիք սքանչելի համապատկեր մը կը պարզէ աչացի ներքեւ Ռընանի գրիչն , երբ կ'ըսէ իւր մոզական վիպական սաղմնաբով նկարագրել Յրէ երգչի եւ յոյժ սերելոյն երգոց ճշմարէտ երկերը: Ահա , այդ միեւնոյն Նազարէթի լերան զազաթան վրայ է , — ուր նոր դարձման ճարքը չէ կ'ըսար նստել առանց իւր ճակարագրին զբայ անհանգիստ դիպացո՞՞մ ճ'ու նենալու , — որ բանաստեղծ-վիպասանը կանգ առնուլ կու տայ մեզ պիտեղու համար զեզազուարճ զաշտորայք , այն սիրալի Բուրբան (ce cercle enchanté) , Ասորո՞ծոց արտայայտեան այդ որրանը , Յիսուսի Հորեղանը : Օգն անդ կ'ենդանի , քաղցրաշունչ , թեթեւ եւ յստակ է , բնութիւնն համօրէն կը խայտայ ու կը ինչպէս , անասունք իսկ կը մամտակցին սոց զուարթութեան , եւ այդ լուրջ պատմաբանն , բոլորովին յախտակեալ իւր յիշատակներով սապէս կը շարունակէ իւր նկարագրութիւնը . «Թեթեւաթուիչ եւ աշխոյժ տատրակներն , երկնագոյն սարեակներն այնքան թեթեւամարմին են , որ կու գան հանգչիլ տունկի մը վրայ առանց զայն ծռելու , բրկաւոր արտոյաններ որ կու գան ստէպ նստիլ ճամտորդին ոտից ներքեւ , գետակներու քաղցրահայեաց եւ կենդանի փոքր կրիայներ , ամօթիած եւ ծանր պիմօք արագիլներ ,

որ մերկանալով ամեն վախտաութենէն , շատ մօտ կու գան մարդուս եւ կարծես իրենց կը կանչեն զինքը»

Կեցցէ՛ Ռընան . արդարեւ շատ քիչ ուձնան կարդացեր եմ, սակայն Ռընանի այս ուձնակն գործած տպաւորութիւնն յիս անջնջելի է . իւր այսպիսի մէն մի էջերն ընթեռնելով չեմ կարող զուպել զիս գոչելէ , «Վա՛յ, գեղեցիկ հովուերգութեանդ » :

Սակայն Ռընան առաջ կերթայ եւ Յիսուսէ պահ մը կանցնի Աստուածահօր , որ առայժ քեզայն ծ'է (un jeune villageois), իսկ Յիսուս՝ թէպէտ տղէտ ըստ մեր նոր գաղափարաց՝ պարտաւէտ անձ ըլլալ (une personne exquise), ի նորք եւ զաւարթ քարոյշ (un fin et joyeux moraliste) , կանանց համար մի վաւիտեակ զգացմամբ ոգևորեալ, սիրող զրօսանաց, ինչպէս որ կ'ապացուցանեն Կանայի հարսանիքն , ու ինքզինքն ալ ինչոյնչ Բեմաւարտապէս սիրելի եւ կարեկէց յեւանդ :

«Նորածին քրիստոնէութեան բոլոր պատմութիւնը հիասքանչ հովուերգութիւն մ'եղաւ . . . Մեխա մը ի սեղանի հարսանեաց, շուայտուհին (la courtisane) եւ բարի Զաքէտը հըրաւիրեալ իւր ինչոյնչ, հիմնադիրք երկնից արքայութեան հարսնածունըրու խմբի մը պէս. անոն այն զոր համարձակեցաւ գործել Գալիլեա, այն զոր ընդունել տուաւ :»

Արդ տեղի չիկայ յուզուելու Ռընանի այսպիսի անիմատտ եւ հայնոյալի յառաջբերութիւններէ , քանզի նորա բոլոր այս կարգի ուսումնասիրութեանց մէջ ստեղծ կը հանգիարուի այդպիսի ամպարչաութեանց , անտեղութեանց եւ նամանաւանդ աչքի դարնուլ անթիւ հակաութեանց , եւ կարծես Ռընան, այս մեր ըսածը հաստատելու համար է որ կը յաւելու . «Ներքի է կարծել թէ Յիսուս իբր հրաշագործ համբաւ ստացաւ եւ որոյ շատ երկար չը դիմացաւ եւ ինքն ալ արդէն այս մտինս եղած կարծեաց ունայնութիւնն զգալով չաշխատեցաւ այդ համբաւոյ պահպանման» վասնզի ինչ զօրութեամբ պիտի հրաշք գործէր , նա Աստուածային ծագում չունէր , քանի որ ըստ Ռընանի «Նա Աստուծոյ որդի է , Բայց ամեն մարդիկ Աստուծոյ որդի էն , եւ կարող էն ալ ըլլալ որպէս աստիճանաւ : Երբէկ Յիսուս մարտնչանցոց ինչպէն էր Աստուծոյ ի մարտնչորո՞մն ընդունել պալաւ :»

Իսպց կիթէ Ռընան կը բառնայ Յիսուսէ Աստուածութիւնը այսու հանդերձ նա սղէտ եւ անպութ չէ , լաւ գնահատող մ'է , նա զիտէ իւրովսանն Յիսուսի մեծ կարողութիւնները . եւ անոնքնաբերական ճարտասանութեամբ մը, իւր գրքի վերջի տասը

Եջերու մէջ հետեւեալ մարդկային աստուածացումը կը պարզէ, գոչելով ի խորոց պատէ . «Plaçons donc au sommet de la grandeur humaine la personne de Jésus»

Սակայն ներդուլթիւն, Ռընան որչափ խղճամիտ եւ բարեգութ անքան ալ երախտազէտ է, եւ Յիսուսի հետ ճարդկայն ձեռնարկեան այլ բարձանց վրայ կը դասէ իւր սիրելի երկու վարպետները, պարտաւոր եւ քաղցր Մարկոս Աւրելիոսը եւ խնամք եւ քաղցրաբարոյ Սիլինոզան :

Այսպէս Ռընանի համար Յիսուս՝ Աստուած չէ, եւ ոչ ալ Աստուածարանութիւն կայ, ոչ Հանգանակ հաւատոյ, ոչ Սրբութիւն Սրբոյ, Մկրտութիւնը երկրորդական բան. Սուրբ Հաղորդութիւնն ալ փոխարեւորութիւն մը: Եւ այս ամենայնի փոխարէն Ռընան կը հիմնէ յաւիտենական, բացարձակ, վերջնական զոք կրօնքը (la religion pure), վանդի ազատ է ո՛ր եւ է Աստուածարանութենէ, կրօնական վարդապետութիւններէ, եւ ո՛ր եւ է պաշտօնական արարողութենէ . նա կը հիմնէ զուս պաշտամունքը որ ոչ թուական եւ ոչ ալ հայրենիք ունի, այն զոր պիտի գործածեն բարձրագաս հոգիներն մինչ զվերջ ժամանակի:

Եւ ահաւասիկ այլ զբքի վերջին խօսքը :

—Ռընանի նախորդ գրուածք՝ մեր պաշտամանց՝ կենդանւոյն Աստուծոյ տեղ՝ կ'ընծայեն մի զուս զազափար, մտատիպար մը, վերացում մը : Մինչդեռ Vie de Jésusն՝ իբր եզրակացութիւն միւր կը ներկայէ, փոխան որդւոյն Աստուծոյ, սպէտ զիւրահաւատութենէ աստուածացեալ մարդ մ'որ գերծ չէ մեր կրքերէն, թշուառութենէ եւ սխալմունքէ, մտքի այնպիսի բարձրութեան տէր մէկն որ ազատ չեղաւ խռովութենէ եւ յուզմունքէ . մինչ ցտենդ եւ ցզաւանցում փառաւորեալ անձնաւորութիւն մը, գրեթէ գերմարդկային մեծութեամբ Աստուածամուր մ'որ սակայն իւր մեծութիւնն ընդունելու հարկազրկ զմարդիկ ամենացաւալի միջոցներով, եւ ի վերայ այսր ամենայնի հրաշագործ եւ զիւսան առանց համոզման:

Սրբ, բնական է թէ այսպիսի անսեղութիւնք չը պիտի մարտէին, վանորոյ Քրիստոնեայ աշխարհին եկեղեցականաց սնիթիւ եւ հրատապ պատուիրանսպրկոյն (mandement), աշխարհականաց եռանդնալիւ, խնայտնալիւ եւ զիտուն հրատաւրակութիւններն եկան փարատել այն համաճարակն, որ կուզար Ռընանէ ազականելու եւ հարկանելու Քրիստոսապաշտ հոգիներ:


ընն : Եւ ապաքէն, բարեպաշտ եւ մեծին Վալլօնի (\*) հմտալից, ճշգրիտ եւ աննման հաստրն սուաւ վերջին հարուածն այդ ժանտախտին :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆՃԵԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Բ

Ծ Ո Վ Ա Ն Ա Ր ՈՒ Թ Ե Ա Ն (MAL DE MER) Վ Ր Ա Յ

Ն Ո Ր Տ Ե Ս ՈՒ Թ Ի Ի Ն



Բնախօսն Պ. Ռօչէ, վերջերս ստաջարիկց մի նոր տեսու-  
թիւն ծովահարութեան վրայ : Հեղինակաց ընդհանուր կարծի-  
քը ընդունելով հանդերձ, թէ նաւախտութեան ախտանշանն  
են ըզեղային սակաւարիւնութեան արդիւնք, բնախօսն կը կար-  
ծէ թէ տակ չփոթութիւնն՝ զոր նաւուն մէջ կրած շարժմանց  
անվարժ լինելն կը պատճառէ մկնային կծկութեամբ, արեան բը-  
նական շարժումը կը խանդարէ՝ որով այս ըզեղային սակաւա-  
րիւնութիւն յոռաջ կուգայ :

Սոյն այս տեսութեան ի նպատո՞ ի մէջ կը բերէ մկնային  
եւ մկնաթաղանթին բազմերակ զրութեամբ կազմուած ընդու-  
նարանին կարի տարողութեան խորհրդածութիւնը, տարողու-  
թիւն՝ որոյ կարեւորութիւնն ապացուցեալ է Յունտլի հնացեալ  
սրուակին (ventouse) ներգործութեամբ. ձգտականութեան (to-  
nicité) եւ ի դարձ չրջանի արեան, այսինքն՝ այս ընդունարանը  
պարպելու գործողութեան ժամանակ սեղի ունեցող մկնային  
կամայական կամ անդրադարձ կծկութեանց կատարած երեւելի  
զերով . վերջապէս, հաւասարակշռութիւնը պահելու եւ : մեր

(\*) La Vie de Jésus et son nouvel historien.

այլ շարժմանց մէջ՝ մկնային անդրադարձ դորձողութեան՝ կա-  
մայականին վրայ ունեցած նշանաւոր առաւելութեամբ ։

Ուստի՝ ենթադրելով՝ որ նաև շարժմանց անլարժութիւն-  
ներն եւ հետեւաբար հաւասարակչութիւնը կորոնցներն՝ կը բառ-  
նայ մկնային ձգտականութիւնը եւ անդրադարձ շարժումները  
որք ստիւրական հաւասարակչութիւնը պահելու կը ծառայեն ,  
այս թուութիւնէն յառաջ կու գայ շրջապատային ընդունարանի  
տարողութեան մի երեւելի աճումը, եւ, հետեւաբար ըզըզային  
սակաւարիւնութիւն մը, որ ծովահարութեան մեկնութիւնը տա-  
լու կը բաւէ։ Եւ որ ընդ երկար՝ դիտուց տակ անշարժ կեցող  
զինուորաց ունեցած թալուկի յար եւ նման մի երեւոյթ է ։

Ս. յսպէս կրնայ մեկնուիլ թէ ինչո՞ւ նաև ուն գէպ յերկայնու-  
թիւն տատանած ժամանակ, վայրէջքը ամենէն դժուարինն է,  
քանզի յայնժամ ընդդիմահարութեան զգացութիւնը կատարելա-  
պէս կ'անհետանայ եւ միանունը առաւել եւս կը թուլնան։ Նոյն-  
պէս կը հասկցուի թէ ինչո՞ւ պառկած կենալը, որովայնը ճնշե-  
լը, մարմինը նեցուկով բռնել տալը, ծովախտութեան դէմ առա-  
ւել կամ նուազ ազդու միջոցներ են ։ Ատոր համար է որ Ալփէ-  
րիայի սուրճանդակներ ուղտի վրայ երկար ճանապարհորդութիւն  
մ'ըրած ատեննին յոգնութիւն, Ուղտահարութիւն չունենալու հա-  
մար, բովանդակ իրենց իրանը լաթերով կը փաթթեն։

Ըստ այս տեսութեան, զիւրաւ կը հասկցուի նաև թէ այս  
որ նաւակի մը տատանմանը վարժ ըլլալով հանդերձ, կրնայ  
սակայն մեծ նաևու մը վրայ ծովահարութիւն ունենալ իւր վար-  
ժութեան վայրկենական կորստեամբ ։

Նմանապէս, եթէ շատ սղտիկ սղայք ծովահարութիւն չեն  
ունենար, պատճառն այս է որ անդրադարձութեան կրթութիւն-  
ներն տակաւին կատարեալ չէ ի նոսա ։ Հաստատուն գիտնի մը  
վրայ եւս կը դիմեն, կ'իյնան իբր նաևու մը տախտակամածին  
վրայ։ Եւ ինչպէս կ'ըսէ Պ. Ռօչէ, «անսովոր լինելու սովորութիւն-  
նը ունին»։

Ուրեմն, կը յարէ ընախօսն, ամոքիչ, թմբկեցուցիչ, անդ-  
գայացուցիչ դեղերու մէջ մի փնտռէք ձեր ազետից դարմանը ։  
Միանունքը զրգող գեղերու դիմեցէք մանաւանդ, եւ կամայա-  
կան շարժմանց մէջ փնտռեցէք անդրադարձ ձգտականութեանց  
պակասած փոխարինութիւնը ։ Փորձական բժշկաց սուած խոր-  
հուրդն ալ այս է ։

«Շարունակ շրջեցէք, անշարժ մի կենաք», կ'ըսէ Հոկի ։

« Ծովահարութեան չբռնուելու համար, կ'ըսէ Արոնսօն, պէտք է, յառաջ քան զամենայն, ի-ր հասարակչութիւնը պահելու ջանալ: պէտք է ընել, ինչ որ կ'ընեն ընազգաբար հինաւորոց նաւավարք»: « Վարժութեան բոլոր զազանիքն, կ'ըսէ Փօնակրիվ, այս երկու բառից վրայ կայացեալ է. Շարժում քնելը շարունակել էս փրս- իովանց միջոցին կերակուր ուտել »:

Բաց ատօր, Պ. Ռօշէ կը յանձնարարէ բնամորմի (strychnine), հաճարի ժանգի եւ ածխաթթու պարունակող ըմպելեաց զոր- ծածութիւնը: Նաւը մտնելէն մի քանի օր յառաջ 3 կամ 4 հա- զարակրամ բնամորմ անուշն՝ ծովահարութեան դէմ ստողջա- պահիկ մի միջոց է :

Այդ պեղորէից վրայ կրնայ յաւելցուիլ բնաքինայի ծծմբատ (sulfate de quinine), զոր Պ. Կարոլոս Ռիշէ՝ 6 կամ 8 տաս- նորդակրամ քանակութեամբ կու տայ նաւ մտնելու ժամանակ :

Յ. Վ. Բ

Մ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԵՒ

Փ Ո Ւ Ա Կ Ե Ր Պ Ո Ի Թ Ի Ի Ն

(EVOLUTION)

Լիոնի՝ գիտութեանց կաճառին (Faculté) ուսուցիչ մը վեր- ջերս հրատարակեց մի հետաքրքրաշարժ տեղեկութիւն լուսա-ւոր զգայութեանց յորինուածութեան նոր տեսութեան վրայ : Պ. Ռափաէլ Տիւպուա ջանաց ուսումնասիրել աչքը իւր նախ- նական, ինչպէս որ ինքն կ'ըսէ, կամ գէթ իւր ամենէն տարրա- կան վիճակին վերածելով: Ասոր համար առաւ նա սորակեացը (pholade), որ ծովային կակղամորթ մի է, որոջ նուրբ եւ աղեղ- նաձև պատեանին մէջէն մերկ կ'երևի մարմնոյն մէկ մասը, որ եւ իւր բոլոր պատենաւոր երեսէն տեսնելու, (ընդ ազօտ տես- նելու անչուշտ) բայց լոյսը մութէն զանազանելու, նաեւ մի քա-

նի գոյնը որոշելու, եւ իւր գունաւոր եւ լուսաւոր տպաւորութիւնները կերպով մը արտայայտելու ընդունակ է:

Այս բանիս նկատմամբ ըրած փորձերէն հեղինակին կը հետեւցնէ թէ մարդուն աչաց յօրինուածութեան եւ այս տեսութեան (զոր կը կոչէ մաշկատեսութիւն) (dermatoptique), եղանակին մէջ նմանութիւն մը կայ: Աստի դիւրին է եղբակրացիկ թէ՛ տեսութիւնն է մի շքափեյի երեւոյթի տեսակ, եւ թէ բոլոր զգայարանը կրնան յանդիլ համանման վերլուծութեան: Եւ ուսուցիչն կը յաւելու թէ՛ այս կ'արդարացնէ Ժ. Գ. զարուն մէջ Ս. Թոմմաս Ակուսինացոյն ունեցած խնայասիրական բմբումունքը, յասելն թէ «Ձէ պարո գնել այլ ինչ գնայարանքս քոց ի շքափեյեաց» եւ կը յաւելու փիլիսոփայապէս «ուրթ դարեր տպասել հարկ եղաւ փիլիսոփային ենթագրութիւնը գիտական ճշմարտութեան փոխակերպելու համար»: Չոր կրնամք այսպէս թարգմանել. ուրթ դարեր հարկ եղաւ գիտնոց որպէս զի սուրբ եւ խնայասուն փիլիսոփային ենթագրութիւնը գիտական գննութեան արդիւնքի մը փոխակերպին:

Այս մի ուրիշ ապացոյց է յաւելեալ այն ամենուն վրայ որք կը յայտնեն թէ գիտութիւնն կ'ընթանայ դէպ ի միութիւն. այլապէս ըսելով, գիտական գննութեանց արդիւնք կը միտին զամբան զգամ ապացուցանել ճշմարտին միութեան փիլիսոփայական ճշմարտութեան ճշգրտութիւնը:

Մի ուրիշ հատած՝ որ գիտութեանց Ակադեմիայի անդամի մը, Պ. Ա. Կոթիէի հմտալից զրջէն ելած է, եւ կը խօսի արդի սարրապիտութեան խնդրոց վրայ, սոյն այս ձգտումը առաւել եւս կը լուսաբանէ: Կ'երեւի թէ, կ'ըսէ նա, բնութիւնը խնայասիրողաց միտքը ստէպ զբաղեցնող ամենաբարձր խնդիրն սա է, «Ինչ է նիւթն, ինչ է զօրութիւն» —: Այս խնդիր լսկ հայեցողականաց միտքը չզբաղեցնէր, այլ ամենամեծ բնագիտաց ուշադրութիւնը կը զբաւէ: «Նիւթն է՞ արդեօք, ինչպէս որ կ'ըմբռնեմք, սահմանաւոր, անհատ, անբաժին, անթափանցական եւ բոլորովին կարծր մասնիկներէ բաղադրեալ շարժմունք ունեցող բան մը, որոց տեսանելի, հպելի գոյացութիւնք իրենց սեպնական ըլլալու եղանակը, իրենց հակազդելու կերպը պարտին. եւ առանց այնց շարժմանց չկրնար սակայն բմբնուիլ թէ այդ նիւթ կրնար լինիլ: Եւ կամ նիւթն է՞ արդեօք, ինչպէս որ կարծեցին Քլերց, Մաքուլուէլ, եւ Վ. Թոմբարն, զանգուած ունեցող եթերէ մը բաղկացեալ՝ որոց պտոյտը կը կազմեն հիւլէ-

ները , սովորական նիւթը : Եւ կամ , աւելի բարձրագոյն կարգի մարդոց կարծեաց հետեւելով , որպիսի են Հ. Պոսքովիչ . Ամբէր , Փարասէյ , Հիրն , արդեօ՞ք մերժելու է զազափարները նիւթէն եւ զօրութենէն զասել որոշելը » :

Եւ այդ համառօտ ցուցակին մէջ ներկայացնել ուղեւով այն ամեն դրութիւններն որք՝ միութեան սլատրուակաւ , շիտթութեան մէջ կիշնան , հեղինակն ի մէջ կը բերէ կենաց գաղանփքը , եւ մի առ մի կը համրէ այն վիանականները՝ որոնք անգործանաւոր նիւթական աշխարհէն յտաջ կը բերեն կեանքը , նաեւ զգայականութիւնը եւ մինչև իսկ խորհողութիւնը :

Քիչ մ'աւելի փիլիսոփայութիւնս պէտք էր մեր իմաստնոց այսպէս բորբոքիլն արուեստական միութեանս մը մէջ անխփելու համար այնպիսի կէտեր , որք յատկաբար եւ ի բնէ տարբեր են ի միմեանց . այսու հանպերձ , որչափ եւ ծայրայեղ ըլլայ , միթէ այս ընդամունք ապացոյց մի չէ այն պիտոցից զոր ունիմք վնասուող զմիութիւնս ի գիտութեանս , ինչու որ զմեզ կը մղէ զայն կնիթադրելու նաեւ անո՞ք ուր չկրնաք գտնուիլ :

Ներկայ դարուս առաջին կէտը՝ բնական զօրութեանց ծանուցեալ եւ գրեթէ ապացուցեալ միութիւնն եղած է մինն ի մեծամեծ եւ հաստահիմն յայտնութեանց այն բնածին պիտոցից որ զմեզ կը մղեն ի ինդիք միութեան : Ծարժումն , ջերմութիւնն , լոյսն , կրկնորականութիւնն , որք մինչև այն ատեն տարբեր զօրութեան պէս նկատուած էին , յետոյ զիրար փոխանակելու եւ մին միւսոյն փոխակերպուելու ընդունակ ճանչցուեցան , ինչպէս կրնան ըլլալ այլ եւ այլ ձեւեր մի եւ նոյն կարողութեան . եւ բնական ուսողութիւնն կրցաւ ամենուն մերձեցնել մի եւ նոյն գրանաշուական ձեւն ու չափը :

Տարրագիտութիւնն , այնպիսի խուղարկութեանց մէջ նուազ յտաջացեալ ըլլալով հանդերձ , շատ կորսնցուց տակայն այն վտանգութիւնը զոր ունէր իւր ամենէն տարրական մարմնոց պարզութեան վրայ , երբ տեսաւ որ արմատական մարմններ՝ որոց բազալլութիւնն իրեն ծանօթ էր , եւ որոց համադրութիւնն իսկ իրեն ընտանեկան եղաւ , լուռն սքարջ մարմնոց պէս կը վարուէին . երբ տեսաւ որ միշտ մի եւ նոյն կերպով բաղադրեալ մարմնոց մը այլատօթ դանազան վիճակներն իւր տեսքն ու յատկութիւնները բորբոքիլն կը փոխէին : Այսպէս նիւթոց միութեան գաղափարն՝ բաղմայ առջեւ իւր աներեւոյթ անուշ գութիւնը կորսնցուց :

Չեմք ուղեր խօսիլ անոնց վրայ՝ որք էակաց կազմիչ գոյացութիւնը եւ որոշիչ զօրութիւնները մնտուելէն հրաժարելով՝ չին ուղեր տեսնել յաշխարհի եթէ ոչ լոկ երեւոյթներ, եւ մընացածը իրբեւ սին պատրանք եւ յնորք կը համարին :

Իրողութիւնը սա է որ, զօրութեանց կապակցութիւնը եւ էակաց աստիճանաւորութիւնը նկատելով, յայտ յանդիման կ'երեւի թէ կարգ մը կը տիրէ՝ զմեզ չըջապատող աշխարհին վրայ, եւ իւր միութեան օրինօք, նորա հեղինակին միութիւնը կը յայտնէ : Եւ այս կարգաւորութիւն՝ փոխակերպութեան հեղինակաց (évolutioniste) յառաջ բերած գլխաւոր պատճառներէն մին է որոց վրայ կը հիմնեն իրենց ենթադրութիւնը : Մէկ կողմանէ էակաց աստիճանաւորութիւնն, միւս կողմանէ նոցա յաջորդութիւնն, մեզ չէ թէ միայն կը յայտնեն այն յատակագծի միութիւնը՝ որ համայն բնութեան վրայ կը տիրէ, այլ նաեւ, նոր յառաջագէմ զարգացումը :

Կրնայ ոք հակառակել ըսելով թէ ասոնք բաւական փաստեր չեն հաստատելու համար թէ տիեզերքը լեցնող էակներ եւ նոյն ինքն տիեզերք աճեցան եւ զարգացան աշխարհածնական յաջորդութեամբ, եւ էակածնեղեամբ (ontogéniquement) իրարմէ կախում ունենալով : Բայց անդ աւելի պայծառ կ'երեւի այն միութեան յայտնութիւնն որ առաջնորդեց անոնց փոխակերպութեան եւ որ զանոնք իրարու հետ կը կապէ : Փոխակերպութիւնն (évolutionisme)՝ զոր շիտթելու չէ կերպարանափոխութեան հետ (transformisme), զրութիւն մի է որ մեծաձայն կը վիպէ աշխարհի միութեան եւ անոր զանազան տարերաց ի նպատ : Այս զրութիւն աւելի նպատաւոր կ'երեւի միութեան՝ քան յաջորդաբար արարչագործութեան զրութիւնը, որ անոր բոլորովին հակառակն է : Արարչագործ պատճառի ուղակի եւ կրկնակի միջամտութիւնն՝ կրցաւ պահել անտարակոյս յաշխարհի այն յատակագծի միութիւնը որ առաջնորդեց այս այլ եւ այլ արարչութեանց, սակայն եւ այնպէս՝ ստեղծեալ նիւթոյ եւ Աստուծոյ անոր մէջ զրած զօրութեանց փոխակերպութեամբ, էակաց յաջորդաբար յառաջ գալը՝ արարչագործութեան միութեան հետ աւելի յարմար ըլլալ կը թուի :


Համառօտ ասել, սոյն կէտի նկատմամբ երեք զրութիւնք կան. 1. ազատ եւ յաջորդական արարչութեան զրութիւն՝ որ Սուրբ Գրոց զրոյն աւելի համեմատ ըլլալ կը թուի : 2. Կերպարանափոխից զրութիւն, ըստ որում աշխարհն զարգացաւ իւր

գորութեամբք միայն , եւ տեսակներ ըստման արտաքին եւ տիեզերական վայրի գործիչներու ազդեցութեամբ, որոյ այժմեան տեսակարար ձեւերն լոկ արդիւնքն են: 3. Վերջապէս, փոխակերպութեան դրութիւն, որ, տեսակի գաղափարը պահելովն հանդերձ, կ'ընդունի սակայն էակաց փոխակերպական յատկութիւն մը, բայց իբրեւ սեպհական ինչ նոցա եւ իբրեւ իրենց յատկացեալ այն գորութեանց հետ զոր ի լինելութեան իւրեանց ընդունեցան :

Փոխակերպութեան եւ կերպարանափոխութեան մէջ եղած զանազանութեան ինչ արժէք ունենալը սակաւին չեմք կարող ճշդել, եւ կարծեմք թէ՛ բազումք նուրբ պիտի գտնեն զայն : Այսու հանդերձ՝ այս մի դատապարտութիւն է զոր վճռելն կը զգուշանամք , վասնզի մեզ կը թուի թէ իբր ապացուցեալ չէ: Բայց եւ այնպէս՝ այս տեսութեան եւ սորա ստաւել կամ նուազ ճշգրութեան համար ինչ որ ալ ըսուի, նա ստուգիւ կը համապատասխանէ չքեղապէս այն միութեան բնածին հարկին որ գմեղ կը գրաւէ եւ զոր կը զգամք թէ պէտք է որ աշխարհիս օրէնքն ըլլայ :

Այս է ստուգիւ այժմեան զիտութեան երեւելի ձգտումներն մին , եւ այս պատճառաւ է որ հաճելի է մեզ զայն կոչել իբրեւ մի նոր արտայայտութիւն ի նորատու միութեան , որ , է ստուգիւ ճշմարտութիւնն:

Յ. Վ. Բ.



## ՄԱՐՄՆԱՄԱՐՁ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ



Շարայարութիւն (\*)

### ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Զգոտւմ բազկաց

1. Տասներորդ կրթանց համար պատուիրեալ կերպով բազուկներդ զիր կուրծքիդ վրայ . 2. բազուկներդ հորիզոնական զիրքով ետ տար՝ կուրծքդ սակաւ ինչ կամարածեւ . 3. կուրծքներդ առաջին զիրքին վերադարձուր :

Կրկնէ 6,8,10 անգամ :

### ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Զգոտւմ բազկաց

1. Բազուկներդ երկու կողմ նեւէ՛ հորիզոնական կերպով . 2. կուրծքներդ կուրծքիդ վրայ բեր . 3. դարձեալ առաջին զիրքը բռնէ :

Այս կրթանքը նախորդին հակադարձն է .

Կրկնէ 6,8,10 անգամ :

### ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Շրջոտւմ բազկաց

Ա. 1. Անշարժ զիրքի մէջ՝ բազուկներդ դէպ յառաջ դարձուր շրջանակ մի յորինելով . 2 ձախ բազուկդ կախ ու անշարժ մնայ :

Բ. 1. Վերոյիշեալ շարժումը կատարէ մի եւ նոյն եզունակաւ ձախ բազկաւդ :

---

(\*) Տե՛ս Պարկէր Բ. Տարէ, էջ 96

Գ. 1. Մուսկղ ծոելով՝ ձախ սրունքդ լաւ ձգտած ըլլայ .  
2. աջ բազկաւ դէս յառաջ չըջանակ մի յօրինէ :

Դ. 1. Աջ սրունքդ յառաջ քչէ՝ ծունկդ ծոելով , ձախ սր-  
ունքդ լաւ ձգտած ըլլայ . 2. ձախ բազկաւ դէս յառաջ չըջա-  
նակ մի յօրինէ :

Ե. 1. Ա. և. Բ. շարժմանց զիրքին մէջ վերադարձիւ , 2.  
երկու բազկաւ յառաջ կոչս չըջանակ մի յօրինէ :

Ա. Բ. Գ. Դ. Ե. շարժումները կրկնէ՝ չըջանակները յետ-  
կոչս կատարելով :

Իւրաքանչիւր շարժումը 6,8, 10 կրկնէ :

### ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

#### Բարձրացում բազկաց

1. Բազուկներդ կախ ևւ կռուփներդ փակ բռնէ . 2. կողմ-  
նակի վերցուր՝ կարելի ևզածին չափ վեր , այնպէս որ իւրա-  
քանչիւր բազուկդ կիսաչըջանակ մ'ընէ՝ առանց արմուկիդ ծը-  
ռելուն :

Կրկնէ 6,8,10 անգամ :

### ՎՅՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

#### Ելեւեջ բազկաց

Այս շարժումը նախորդին հակադարձն է :

Կրկնէ 6,8,10 անգամ :

### ԵՕԹԵԻՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

#### Ելեւեջ բազկաց

1. Բազուկներդ ևտ տար . 2. առջիդ բեր ևւ բարձրացուր  
մինչև ուղահայեաց զիրքը . 3. յետոյ կորովով առջի զիրքին  
բեր :

Կրկնէ 6,8,10 անգամ :

**ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**

Ելեեզ բազկաց

Ա.յս շարժումը նախորդին հակադարձն է :  
Կրկնէ 6,8,10 անգամ :

**ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**

Թիւրումն մարմնոյ

1. Բազուկներդ վեր բռնելով՝ սրունքներդ բաց 60 կամ 70 հարիւրորդամետրի չափ , մարմինդ ծռէ յստաջ կոյս եւ բազուկներդ ուժով սրունքներուդ մէջ տեղ բեր . 2. առաջին դիրքը բռնէ զարձեալ :

Ա.յս կրկնաց մէջ բազկաց եւ ծնագաց յօդերը սակաւ լինչ հակելու է :

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**

Թիւրումն բազկաց

1. Բազուկներդ ազդրերուդ վրայ բեր՝ կէս մը ծռած . կորովով ետ մղէ դայնս՝ այնպէս որ սրունքներդ իրարու կարելի եղածին չափ մերձենան :

Թիւրումն լուռ ձգտեալ բռնէ :

Կրկնէ 5,10,15 անգամ :

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**

Չգտումն բազկաց

1. Միացուր ձեռքերդ յետկոյս . վերցուր բազուկներդ այնպէս ղի սրունքներդ լողորտլին ճերս մտնեն . 2. զարձեալ առաջին դիրքը բռնէ :

Երկրորդ շարժումը պէտք է , որչափ կարելի է , ճնշաու-  
թեան աւարտման հետ բերել .

Կրկնէ 5,10,15 անգամ :

---

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**

Ձգտումն բազկաց

1. Կռուփներդ աղլրերուդ վրայ զիր . երկնցուր բազուկ-  
ներդ՝ իջնցունելով . 2. առաջին զիրքը բռնէ՝ զարձեալ :

Կրկնէ 8,12,16 անգամ :

---

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**

Ձգտումն բազկաց

Կռուփներդ աղլրերուդ վրայ զիր . բազուկներդ ուժով  
յետկոյս երկնցուր . 2. առաջին զիրքը բռնէ :

Կրկնէ 8,12,16 անգամ :

---

**ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ**


Ձգտումն բազկաց

1. Կռուփներդ լաւ փակ բռնելով՝ բազուկներդ կատարեալ  
կերպով ձգտէ յաջ եւ յանձախ . 2. բազուկներդ հորիզոնական  
զիրքով իրարու մերձեցուր ուժով, բայց կռուփներդ իրարու չը  
դպչին . 3. առաջին զիրքը բռնէ՝ զարձեալ :

Կրկնէ 8, 12, 16 անգամ :

Շարայարելի

ՅՈՎՀ. Վ. ԱՃԷՄԵԱՆ



ՊՍՏԿԵՐ տասն ե. հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է  
Կ. Պոլսոյ համար . . . . . 40 դահեկան  
Գաւառաց եւ օտար երկիրներու համար  
քղբատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

## Իշխանացիք թիւ 2 դահեկան

ՊՍՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւշիլ փողոց  
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ քերթին  
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YËCHIL N<sup>o</sup> 1

معرف نظارت جليله سنك رخصتيله طبع اولمشدر